Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ԽԱՉՎԵՐԱՑԻ ՆԱԽԱՏՈՆԱԿԻՆ, ԱՄՆ ԱՐԵՄՄՏՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴՅԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(ԱՄՆ, Բրրբենկ, 11 սեպտեմբերի, 2010 թ.)

Խաչն կենարար, որ եղեւ մեզ փրկութիւն,
Սովաւ ամենեքեան զՔեզ բարեբանեմք:

... Նշան յաղթութեան եղուր մեզ,
Սովաւ զկեանս մեր պահեա:
(Շարական)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Խաչվերացի տոնի նավակատյաց այս սուրբ օրը համախմբվել ենք մյուռոնադրոշմ օծումով նվիրագործելու եւ Սրբոց Ղեւոնդյանց անունով կոչելու ԱՄՆ Արեւմտյան Հայոց թեմի նորակառույց առաջնորդանիստ եկեղեցին: Խնդառատ հոգով ողջունում ենք ձեզ եւ շարականագրի օրհներգության այս բառերով Մեր հայցն ենք բարձրացնում երկինք, որպեսզի այս սուրբ տաճարը՝ պսակված տերունական ամենակեցույց խաչով, նոր լույս բերի ամերիկաբնակ մեր զավակների հոգեւոր պայծառությանը եւ ազգային կյանքի զորությանը: Ուրախ ենք, որ մեր ժողովրդի խնդությունն այսօր իրենց աղոթակցությամբ եկել են կիսելու քույր եկեղեցիների եւ Կալիֆորնիայի նահանգային եւ Լոս Անջելոսի քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները, մեր հոգեւոր եղբայրներն ու քույրերը, որոնց բարձր գնահատանքով բերում ենք Մեր սերն ու բարեմաղթանքները: Ողջունում ենք այստեղ ներկայությունը ՀՀ դեսպան Տիար Թաթուլ Մարգարյանի, Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Նախագահ Տիար Պերճ Սեդրակյանի. Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի ներկայացուցիչ Գերաշնորհ Տ. Մուշեղ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի, Հայ Կաթողիկե եւ մյուս հարանվանությանց ներկայացուցիչների:

Երկնային նախախնամությամբ է, որ այսօր միահյուսվել են Աստծո տաճարի օծման եւ Խաչի բարձրացման ու փառաբանման խորհուրդները: Մեզ համար խաչի վրա գամվեց Աստծո Միածին Որդին, Փրկիչն աշխարհի եւ արդար ու անարատ իր արյունով վճարեց մեր փրկության գինը: Խաչվերացի խորհրդով այսօր նայում ենք խաչին եւ տեսնում ենք մեզ համար խաչված Աստվածորդուն ու մեր հոգու ողջ զորությամբ կրկնում ենք. «Սովաւ ամենեքեան Քեզ բարեբանեմք»: Խաչն է ազատարար ու սրբարար, օրհնաբեր ու շնորհաբաշխ, նեցուկ ու ապավեն նեղյալներին ու վտանգվածներին, քաջություն ու հաղթանակ արդար խորհուրդներին ու գործերին, անմար հույս փրկության ու հավիտենական կյանքի: Այս հավատով մենք խաչը թեեւ հաճախ թանկագին նյութերից ենք ձգտում պատրաստել, մեր ունեցած լավագույնից, սակայն քաջ գիտենք, որ խաչի փառքը իրեն միացած եւ ընդմիշտ իր հետ եղող աստվածային զորությունն է:

Աստծո բարերար կամքով, սիրելի բարեպաշտ հայորդիք, խաչի քարոզությունը մեր

ปฏิทินสอง พระพุทธรูป องค์ใหญ่ ปี

Հընթացս Սբ. Պատարագի

Լոս Անջելոսի քաղաքապետը ողջունում է Վեհափառ Հայրապետին

ժողովրդին նույնպես բաշխեց երկնային հաց, հոգու կերակուր, բաշխեց անթառամ շնորհը՝ Աստծո հետ հաշտության եւ անմար հույսը՝ փրկության ու հավիտենական կյանքի: Խաչը բարերեր կյանք եղավ մեզ համար, խաչը գիր եղավ, երբ թարգման ուզեցինք մեր հոգուն, զենք եղավ, երբ ուզեցին մեզ կործանել, եղավ ապրելու ուժ եւ վերածնվելու զորություն: Խաչին ենք պարտական մեր ձեռքբերումները, ճշմարտության, արդարության եւ հանճարի հոգին, որ լուսավորեցին կյանքի մեր ուղին, խաչին ենք պարտական մեր հաղթանակները, մեր գոյությունը, այսօր՝ վերականգնված մեր պետականության պարծանքը եւ մեր ազատ կյանքի նվաճումները:

Խաչի զորությամբ է հաստատուն ու պայծառ հայ կյանքը նաեւ Ամերիկայում, ձեր պապերի ու հայրերի աստվածսիրությամբ ու հավատով, ովքեր չվհատվեցին դժվարություններից, այլ ապավինած Աստծուն՝ հաղթահարեցին դրանք, նեցուկ եղան միմյանց, հոգացին եկեղեցիների ու դպրոցների համար: Այսօր նույն հավատքով դուք խնամված ու լուսավոր եք պահպանում եկեղեցիներն ու ազգային հաստատությունները: Ձեր հավատքի լույսն է տարածվում բազմաթիվ բարերարությունների ու նախաձեռնությունների վրա, որոնք մարմին առնելով եկեղեցական ու ազգային մեր կյանքում, քաջալերություն են բերում բոլորիս եւ ամրացնում առ Աստված հավատքի ու հույսի մեջ: Ձեր հավատքով եւ աստվածահաճո կյանքով, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, հոգեւոր պայծառությամբ պիտի լցվի այս նոր աղոթատունը, սուրբ տաճարն Աստծո եւ վերածվի տերունական խաչով մեզ շնորհված կենարար ու հրաշագործ զորության: Ձեր աղոթքներով Սրբոց Ղեւոնդյանց եկեղեցում խաղաղության հայց պիտի բարձրանա Ամերիկայի եւ նրա աստվածասեր ժողովրդի համար, որ հեռու լինի փորձություններից, աղետներից, ինչպիսին սեպտեմբերի 11-ն էր: Եկեղեցու մոտ կանգնեցված խաչքարը ձոն-աղոթք է առ Աստված սեպտեմբեր 11-ի հազարավոր անմեղ զոհերի հիշատակին, միաժամանակ եւ հայց, որ ամոքվեն ու փարատվեն նրանց հարազատների եւ բոլոր մարդկանց վշտերն ու հոգսերը:

Հոգեւորոգ այս օրը բարձրացնենք կենարար խաչը մեր հոգիներում, որ նորոգի մեզ այն սիրով, որով Աստված սիրում է մեզ, որ նորոգի մեզ մեր հավատքի մեջ, մեր հույսի մեջ, որպեսզի Քրիստոսի հետ անվարան ընթանանք կյանքի մեր ուղիով եւ արժանի լինենք տերունական սուրբ խաչից բաշխվող օրհնությանը, սուրբ խաչով շնորհվող հաղթությանը եւ հույսին երկնային որդեգրության: Ճշմարիտ հավատքով եւ անկեղծավոր սրտով կրենք տերունական խաչը, որ պահպանի մեզ երեւելի ու աներեւույթ թշնամիներից, վտանգավոր հողմերից եւ հաստատի ոռոգյալ, խաղաղ ու բարերեր ուղիներում: Այս է մեր հորդորը ձեզ, սիրելի ժողովուրդ, այս նորակառույց եւ նորաօծ եկեղեցում, որտեղ մեր աղոթքները խաչի թեւերով երկինք են բարձրանում:

Հոգանք, որ խաչի լույսն ու զորությունը անաղարտ ապրի մեր զավակների սրտերում, որ խաչը կրեն ոչ որպես զարդ, ազգային սովորություն, կամ մոդայիկ նշան, որպէսզի, ինչպես առաքյալն է ասում՝ «Քրիստոսի խաչը ընդունայն չլինի, որովհետեւ կորստեան մատնուածների համար խաչի քարոզութիւնը յիմարութիւն է, իսկ մեզ՝ փրկուածներիս համար՝ Աստծու զօրութիւն» (Ա Կորնթ. Ա 17-18): Հոգանք, որ մեր զավակները մեծանան ճշմարիտ հավատքով, հայրենյաց սիրով ու հայրենի ժառանգությանը հավատարմությամբ, հայոց լեզվի, մեր պատմության իմացությամբ եւ Արարատի արդար պատկերը ու Սուրբ

Էջմիածնի քրիստոսահաստատ լույսը խաչի սլացքով միասնական ու հավատքով պայծառ պահպանեն համայն մեր ժողովրդին:

Հերկնչենք այսօր Հայրենիքում եւ Սփյուռքում առաջ եկող դժվարություններից ու խնդիրներից, այլ արիանանք ձեռքերումներով եւ խաչի զորությամբ, մեր հավատքը աներեր պահելով դիմագրավենք մարտահրավերները, հաղթահարենք ծնունդ առնող խնդիրները: Դեռ ջանքեր պիտի ներդնենք, որ կյանքի կոչվեն ազգային մեր բոլոր իղձերը՝ ծաղկուն դառնա մեր Հայրենիքը, համընդհանուր ճանաչում գտնի Հայոց Ցեղասպանությունը, մեր արդար դատը, Արցախ աշխարհի հերոսական մեր զավակների ազատ ու խաղաղ ապրելու իրավունքը: Խաչը վերցնել, նշանակում է հանձն առնել պարտականությունները, որ ունենք մերձավորների, մեր ժողովրդի, համայն մարդկության եւ մեր գալիքի հանդեպ: Խաչը վերցնել նշանակում է հանձն առնել նույնիսկ ավելին, քան պարտականությունները, այն է՝ մարդկանց հանդեպ սերը: Ծանրություն եւ բեռ չէ խաչը, երբ սիրում ենք Քրիստոսին, մեզ համար խաչված Փրկչին աշխարհի. «Իմ լուծը քաղցր է եւ իմ բեռը թեթեւ», - ասում է Տերը (Մտթ. ԺԱ 30), եւ Նրա հետ քաղցր պտուղներով արգասաբեր, զարթոնքով պայծառ ուղի է խաչը, միմյանց հանդեպ սիրով, արդարությամբ ու ճշմարտությամբ փայլող կյանք:

Խաչվերացի հոգեպարար այս օրը վերստին Մեր բարձր գնահատանքն ու Հայրապետական օրհնությունն ենք բերում Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանին բարեխնամ ու նախանձախնդիր առաջնորդության եւ հայրենասեր ոգու համար: Մեր բարձր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Գերաշնորհ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանին, որ նախաձեռնողը եղավ առաջնորդանիստ եկեղեցու կառուցման: Մեր բարձր գնահատանքն ու Հայրապետական օրհնությունն ենք բերում Սրբոց Ղեւոնդյանց եկեղեցու ազնիվ բարերարներին եւ կառուցողներին, թեմում ծառայող բարեջան հոգեւորականներին, թեմական վարչության անդամներին, կրթական ու ազգային հաստատությունների նվիրյալներին, ձեզ բոլորիդ, հավատավոր ու հարազատ զավակներ մեր Եկեղեցու:

Այսօր Սրբոց Ղեւոնդյանց եւ հանուն հավատքի ու հայրենյաց նահատակված մեր բոլոր սրբերի բարեխոսությունը հայցելով, աղոթենք միասնաբար, որ խաչի ազատարար, սրբարար ու կենարար զորությունը չպակասի աշխարհից ու մեր կյանքից:

Աղոթենք, որ մեր եւ մեր զավակների շուրթերին անլռելի մնա՝ որպես Տիրոջով ուրախ եւ խանդակաթ մեր հոգու առահավատչյա՝ փերուսական խաչի բարձրացման ու պանծացման օրհներգը. «Խաչն կենարար, որ եղեւ մեզ փրկութիւն, սովաւ ամենեքեան զՔեզ բարեբանեմք, ... Նշան յաղթութեան եւրուր մեզ, սովաւ զկեանս մեր պահեա» այսօր եւ միշտ. ամեն: